ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ·

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Յուն· 29· Որոշուեցաւ Ուղուղար գիւղացի (Բորչալուի գաւառ) Աւագ Ղահրամանեանցին ընդունել ի շարս կուսակրօն հոգևորականաց և ուղարկել ժամանակաւոր կերպով Սևանայ վանքը։

Յուն· 29· Ս· Սինօդը հրամայեց՝ մեծ Քեռփանակ գիւղի Գրիգոր Տէր Ոսահակեան, Յակոբ Յոզևանցեան և Գարեգին տէր Ղազարեան քահանաներին, սուտ վկայութիւն տալու համար, Երևանի Նահանգական դատարանի տրձակած վճռի համաձայն ուղարկել Սևան՝ քսան օր ժամանակով խիստ հսկողութեան տակ ապաշխարելու։

Փետ· 1· Որոշուեցաւ Տփխիսարնակ Զաքարիա Զալեանցին ընդունել ի շարս կուսակրօն հոգևորականաց և դրել միաբան Սաղիանու վանքի։

Փետ· 8· Վեհափառ Հայրապետի սրբ· կոնդակի համաձայն Ս· Սինօդը թոյլատրեց պ· Մակար Եկմալեանցին քառաձայն պատարագի արարողութիւնը տարածել և գործադրել մեր եկեղեցւոյ մէջ· այս առթիւ հրամանագրուեցաւ թեմական առաջնորդներին՝ ուղարկել իրենց խմբապետներին և կարող անձանց պ· Եկմալեանցի մօտ ուսանելու։

Փետ· 15· Պատուիրուեցաւ Ջաֆարաբատ գիւղացի (Էջմ· գաւառ) Արիստակէս Գրիգորեան Զօլոյեանցին ձեռնադրել կուսակրօն սարկաւագ և ընդունել Սևանայ վանքի միաբան։

Մարտ· 9· Հրամայուեցաւ Երևանայ Կոնսիստորիային կարգալոյծ անել Դալիղարդաշ գիւղացի (Նոր Բայազիտ) Ղազար քահանայ Տէր Ոսաչատրեանցին։

Մարտ· 31· Հրամայուեցաւ Վանական կառավարութեան ամուրդի և կրկնամուրդի օր նշանակել վանքապատկան գիւղերի՝ Վաղարշապատի համար ամուրդ 10-ն և կրկնամուրդ 15-ն մայիսի· Օշականի համար ամուրդ 12-ն և կրկնամուրդ 17-ն· Ղզուարդի համար ամուրդ 16-ն և կրկնամուրդ 20-ն և Մատաբայի համար ամուրդ 22-ն և կրկնամուրդ 26-ն նոյն ամսի։ Յանկացողները կարող են ներկայանալ Վանական կառավարութեան ատեանին պատշաճաւոր գրաւականով։



ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

ՍՐԲՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՋԸ.

«Եւ որովհետեւ զայս աւետիս ունիմք, սիրելիք, սրբութեամբ զանձինս մեր յանմնայն պղծութենէ մարմնոյ եւ հոգւոյ, կատարեսցուք զսրբութիւն անիւն Աստուծոյ»։

Բ. Կորնթ· Է· 1։

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ առաջին դարու հաւատացեալներն առանց խտրութեան սուրբ էին կոչուում, որովհետև այն գիտակցութիւնը կար, թէ նոցանից իւրաքանչիւրը դուրս էր կորզուած աշխարհային ապականութեան գրկից՝ ամբողջապէս Աստուծոյ նուիրուելու, սուրբ Աստուծոյ պաշտօնին վայել սուրբ կեանք ունենալու համար։ Եւ այս գիտակցութիւնը աւելի կամ պակաս չափով կենդանի է եղել միշտ քրիստոնէական հա-